ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Շրջակա միջավայրի նախարարությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «Շրջակա միջավայրի նախարարության վարչական շենքում ներքին հարդարման կամ վերանորոգման» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-23/11» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի նոյեմբերի 27-ին կնքված ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-23/11» ծածկագրով պայմանագրում 2023 թվականի դեկտեմբերի 13-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության պատճառ՝	Պայմանագրի հավելված №2-ի ծավալաթերթ-նախահաշվի աղյուսակը խմբագրվել է,
Փոփոխության նկարագրություն՝	Պայմանագրի հավելված №2-ի ծավալաթերթ-նախահաշվի աղյուսակը լրացվել է նոր բովանդակությամբ՝ նոր 55-71-րդ կետերով,
Փոփոխության հիմնավորում՝	Պայմանագրի 8.5 կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ **Լիլիթ Զոհրաբյանին**:

Հեռախոս՝ **(011) 818-529:**

Էլ. փոստ՝ gnumner@env.am**:**

Պատվիրատու՝ **Շրջակա միջավայրի նախարարություն:**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1

«27» նոյեմբերի 2023թ. N ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-23/11 պայմանագրի

ք.Երևան «13» «12» 2023թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ս.Աթանեսյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Սամ-Պրոեկտ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն.Հովհաննիսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով կողմերի միջև 2023 թվականի նոյեմբերի 27-ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-23/11» ծածկագրով պայմանագրի 8.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2023 թվականի նոյեմբերի 27-ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-23/11» ծածկագրով պայմանագրի հավելված №2-ի ծավալաթերթ-նախահաշվի աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետերով՝

«

55	Լամինեատե կամ պլաստիկե շրիշակի տեղադրում, ներառյալ անհրաժեշտ բոլոր նյութերը	գմ	1 400
56	Մանրահատակի հղկում	մ²	2 500
57	Լուսատուների ապամոնտաժում	հատ	400
58	Վարդակի կամ անջատիչի փոսորակի քանդում	հատ	500
59	Վարդակի կամ անջատիչի փոխարինում կամ տեղադրում, ներառյալ նյութերը	հատ	1 200
60	Սենյակում առկա գույքի տեղափոխում առանց քանդման աշխատանքների (դուրս բերում կամ տեղադրում)	հատ	5 000
61	Կահույքի ապամոնտաժում և/կամ մոնտաժում	մ²	1 500
62	Անցքի բացում բետոնե պատի վրա Φ100 մմ խողովակի համար	հատ	15 000
63	Դռան լամինատե պառակալ (շրջակալ), ներառյալ տեղադրումը	գմ	2 500
64	Մետաղական դուռ-ճաղավանդակ, ներառյալ փականը և տեղադրումը	մ²	50 000
65	Մետաղական ճաղավանդակ, ներառյալ տեղադրումը	մ²	45 000
66	Օդանցքի ցանց, ներառյալ տեղադրումը	հատ	2 000
67	Մետաղապլաստե խողովակի մոնտաժում Φ20, ներառյալ կցամասերը և խողովակը	գմ	3 500
68	Փական Φ20, ներառյալ մոնտաժումը	հատ	2 500
69	Ցինկապատ 25x25 մմ անկյունակի տեղադրում պատուհանի կամ դռների շեպերում, ներառյալ գիպսենիտի քսահարթումը և ներկումը	գմ	800
70	Հոսանքի բաժանման տուփի ապամոնտաժում, նորի մոնտաժում, ներառյալ նյութերը	հատ	3 500
71	Երեսակալ ներկված ԴՎՊ-ից, ներառյալ տեղադրումը	մ²	2 500

»:

2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2. Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Շրջակա միջավայրի նախարարություն
ք.Երևան, Կառավարական տուն 3
ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011018646
ՀՎՀՀ 02507198
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
Ս.Աթանեսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Սամ-Պրոեկտ» ՍՊԸ
Արագածոտնի մարզ, գյուղ Դավթաշեն, 9 փ., տուն 5
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1150016869699679
ՀՎՀՀ 06954714
«Սամ-Պրոեկտ» ՍՊԸ-ի
տնօրեն
Ն.Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.